ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 1910454641, 1910462834, 1910313115, 1910260667, 1910315623 որոշումներն անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<15>> 01 2020թ. 17-4-10Ր ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով քաղաքացի Սուրեն Ազատի Այվազյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Քաղաքացի Սուրեն Ազատի Այվազյանը ՄԴ/8170-19 դիմումով խնդրել է ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910454641, 1910462834, 1910313115, 1910260667, 1910315623 որոշումները վերահասցեագրել իրեն:

Նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ 1910454641, 1910462834, 1910313115, 1910260667, 1910315623 որոշումների հիմքում դրված լուսանկարները փաստում են, որ դրանցով ամրագրված իրավախախտումները ակնհայտորեն չեն կատարվել Սուրեն Ազատի Այվազյանի կողմից, քանի որ որոշումներով ամրագրված իրավախախտումների հիմքում դրված լուսանկարներից ակնհայտ է, որ ավտոմոբիլը վարում է այլ անձ: Նշված փաստերի համադրումը հիմք է տալիս հաստատված համարել այն հանգամանքը, որ վերջինիս կողմից դիմում ներկայացնելը նպատակ է հետապնդում տրանսպորտային միջոցների սեփականատիրոջն ազատել վարչական պատասխանատվությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910454641, 1910462834, 1910313115, 1910260667, 1910315623 որոշումները թողնել անփոփոխ, իսկ գանգատն՝ առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակներն ուղարկել Սուրեն Ազատի Այվազյանին (հասցեն՝ Սյունիքի մարզ, Գորիս, Թանգու Ձոր փ., տ. 5), Արմեն Վալերիկի Խեդոյանին (հասցեն՝ ք. Երևան, Դավթաշեն 4 փ., շ. 23, բն. 8) և ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե. Կարապետյան

Կատարող Կ. Ղազարյան
Հեռ. 010 562974